

Հաստատված է  
ՀԱԱՀ գիտական խորհրդում  
„-----“, ----- 2016 թ.  
(արձանագրություն № )

Վավերացնում եմ  
նեկտոր  
Ա. Թարվերդյան  
„-----“, ----- 2016 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ  
ԵՐԿՐՈՐԴ ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**Կանոնակարգի դրույթների համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԳ նախարարության  
„Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն մասնագիտական  
ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու  
կարգը„**

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում (ՀԱԱՀ) երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ընդհանուր պայմանները:
2. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը ՀԱԱՀ-ում կազմակերպվում է կիսամյակային (կրեդիտային) սկզբունքով տվյալ մասնագիտության համար հաստատված ուսումնական պլանների, ծրագրերի և ժամանակացույցի համաձայն: Առաջին և ավարտական կուրսերում երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն չի կազմակերպվում: Ցերեկային ուսուցման հավակնորդների դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող, իսկ հեռակա ուսուցման դեպարտամենտում՝ տվյալ կուրսի դասընթացներին նախորդող, երկու շաբաթների ընթացքում:
3. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում է միայն վճարովի սկզբունքով:
4. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը թույլատրվում է, եթե առարկայական տարբերությունները (այդ թվում նաև այն առարկաները,

որոնց ժամաքանակների տարբերությունը կազմում է 25 և ավելի տոկոս) չեն գերազանցում 8-ը (20 կրեդիտը, այն անձանց համար, ովքեր նախորդ մասնագիտությունը սովորել են կրեդիտային համակարգով):

Օտարերկրյա պետական բուհերում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած հավակնորդների համար առարկայական տարբերություններն որոշելիս հաշվի չեն առնվում հայագիտական առարկաները:

5. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդների դիմումները քննարկվում են այդ նպատակով ստեղծված ՀԱԱՀ ատեստավորման հանձնաժողովում: Հանձնաժողովում հարցի քննարկման արդյունքում, սահմանվում է ուսանողի ընդունման ժամկետը, ուսումնական գործընթացի սկիզբը, կուրսը, առարկայական տարբերությունների հանձնման ժամանակացույցը և մյուս պայմանները:

6. Երկրորդ մասնագիտություն ընտրելիս տվյալ մասնագիտության համար հիմնարար առարկաների ատեստավորման առկայությունը (ուսումնասիրությունը) նախկին մասնագիտության առարկաների շարքում պարտադիր են: Ըստ մասնագիտությունների խմբերի դրանք են՝

- Ագրոկենսաբանական մասնագիտություններ՝ կենսաբանություն և քիմիա
- Պարենամթերքի տեխնոլոգիաներ՝ մաթեմատիկա և քիմիա
- Ագրարային ճարտարագիտություն՝ մաթեմատիկա և ֆիզիկա
- Ագրարային տնտեսագիտություն

Անհրաժեշտության դեպքում (առաջին և երկրորդ մասնագիտությունների խիստ անհամապատասխանության, կուրսի ճշգրտման և այլն) ատեստավորող հանձնաժողովը կարող է կազմակերպել հարցազրույց երկրորդ մասնագիտության տվյալ կուրսին նախորդող կուրսերի ուսումնական պլաններում ընդգրկված առարկաներից, որոնք դիմորդը ուսումնասիրել է առաջին մասնագիտությունում: Մերժման դեպքում հանձնաժողովը պատճառաբանված հիմնավորում է իր որոշումը:

7. Ատեստավորման հանձնաժողովը մրցութային հավասար պայմանների դեպքում ըստ հերթականության առավելագույն է տալիս.

- ա) տվյալ մասնագիտությամբ (երկրորդ) աշխատող դիմորդներին,
- բ) առավելագույն մասնագիտական ստաժ ունեցող դիմորդներին,

զ) դիպլոմի ներդիրում նշված առարկաների քննությունների առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին,

դ) հարցազրույցի արդյունքում առավել բարձր ցուցանիշներ ստացած դիմորդներին

**8.** Տարբեր պատճառներով գոյացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր: Դրանց ցանկը և ծավալները որոշում է ՀԱԱՀ-ը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները համալսարանի կողմից սահմանված անհատական ժամանակացույցով:

**9.** Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների շարժի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

**10.** Ոչ պետական չհավատարմագրված բուհերի շրջանավարտներին չի թույլատրվում ստանալ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն Հայաստանի ազգային ազրարային համալսարանում: